

վիճենա դառնալ: Ասկէ զատ նաեւ Լեւոնեան վարժարանի Գիււանին մէջէն, ուր փոխադրուած է Հռոմի Ս. Մարիամ Եգիպտացի ազգային եկեղեցւոյն դիւանը, ինչ ինչ տեղեկութիւններ քաղեցի: Ասոնք ամէնքն, ցորչափ յիշեալ անձինքներու կը վերաբերին, անոնց կենսագրութեան մէջ գրածներուս ճշգրութիւնը կը հաստատեն եւ աւելի կը լուսաւորեն:

1. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽՈՒԼ

ՊԱՏՐԻԱՐԷ Կ. ՊՈԼՍՈՅ

(Նիստ Ս. Ժողովոյ Տարածման Հաւատոյ):

1626 119.22 (7 Սեպտ.): Որովհետեւ Կ. Պոլսոյ Հայոց Յովհաննէս Պատրիարքը նամակներ գրած էր եւ Տաճկաց բռնութիւնները պատմելով Ս. Քահանայապետին, կը խնդրէր որ իրեն եւ իր եկեղեցականներուն համար յատուկ եկեղեցի մը որոշուի, եւ ասոնց համար Ս. Քահանայապետը դրամական նպաստ մ'որոշէ, Ս. Ժողովը կը հրամայէ գրել Պոլսոյ Յիսուսեանց եւ Քափուչիներու Մեծաւորներուն, որ տեղեկութիւն տան Յովհաննէս Պատրիարքին եւ անոր եկեղեցականներուն վրայ, ինչպէս նաեւ անոնց թուոյն վրայ: Եւ յառաջ քան ուզածները զրկելը, պէտք է հոգւոց փրկութեան համար յիշեալ Պատրիարքին խնդրածներուն հետամուտ ըլլալ:

1627 256.30 (26 Յուլ.): Յիսուսեանց Մեծաւորին նամակէն կ'իմացուի, որ Յովհաննէս